



# ԼԱՆՏԵՐՆ

Gantegh - Lanterne - Lantern

Տեղեկատու - Bulletin - Newsletter

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի  
Volume 2, no 3 Հոկտեմբեր-նոյեմբեր-Դեկտեմբեր 2024

Մեր աչքերը կը վստահին լոյսին՝ տեսնելու համար մեր չորս կողմը: Տեսողութիւնը մեզի տեղեկութիւն կու տայ աշխարհին մասին, եւ կարելի կը դարձնէ, որ ճանչնանք արժէքը անոր գեղեցկութեան, նաեւ զգուշանանք խոչընդոտներէ: Լոյսը մեզ կ'առաջնորդէ դէպի գեղեցիկը, լաւն ու իրականը: Քրիստոնէութիւնը կը խօսի այլ լոյսի մը մասին, շատ աւելի կարեւոր եւ իրական քան որեւէ տեսանելի ինչ. այն՝ Ճշմարիտ Լոյսն է: Այդ ուժ չէ, այլ անձ մը որ աշխարհ եկաւ լոյս տալու բոլորիս: Կը յուսանք թէ «Կանթեղ»-ի այս օրինակէն, Ճշմարիտ Լոյսը կը շողայ, բաշխելով գործնական պայծառութիւն՝ ըստ իւրաքանչիւրի պայմաններուն:

## Յովհաննէս 1.9. «Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը:»

**KNOW  
JESUS  
KNOW  
PEACE**

Life is hard. Anticipating an important exam at school, wondering why your daughter isn't answering her phone when she is out late, or getting devastating news about the health of a loved one can steal our inner peace. Each crisis presents an opportunity to trust the One who controls every circumstance. Only He, the everlasting rock, can keep us in perfect peace.

*"You keep him in perfect peace whose mind is stayed on you, because he trusts in you. Trust in the Lord forever, for the Lord God is an everlasting rock." Isaiah 26:3,4*

Avez-vous déjà considéré le raisonnement de Jésus lorsqu'il dit à ses disciples qu'ils auront la paix? Il ne s'agissait pas de leur faire croire que leurs vies seraient faciles. En fait, bien au contraire, Jésus leur dit qu'en ce monde ils seront dans la détresse. Malgré cette dure réalité, Il leur assure qu'ils auront la paix car ils la chercheraient en Lui, en prêtant attention à son enseignement et en sachant qu'Il a vaincu le monde.

Jesus asks "And which of you by being anxious can add a single hour to his span of life?" Good question! So why do we worry about things we do not have control over, such as random accidents or how other people will react? Every behaviour has a reward, and the behaviour of worrying is no exception. Worrying often feels better than doing nothing, at least in the short term. It also gives us an illusion of power and control which feels better than feeling weak. In place of illusions, Jesus provides knowledge of the powerful caregiving Father who feeds us.

How can knowing Jesus and His words bring us peace? ***"These things I have spoken to you, that in Me you may have peace. In the world you will have tribulation; but be of good cheer, I have overcome the world."* John 16:33**

Knowledge is as valuable to the mind as light is to the eyes. Plato used the Allegory of the Cave to illustrate how knowledge and enlightenment are like moving from darkness into light. That's why it makes sense to spend a lot of time in school. However, more schooling doesn't necessarily protect us from anxiety or make us wiser. It is in knowing & loving Jesus that we can find true peace and live meaningful lives. At the end of the 4th century, Saint Augustine expressed this idea in a famous line in his book Confessions: *"You have made us for yourself, O Lord, and our hearts are restless until they rest in You."*

## Հոկտեմբեր-Նոյեմբեր-Դեկտեմբեր 2024-ի տօները

### Հոկտեմբեր


- Շբթ. 12 Տօն Մեր Ա. Թարգմանիչ վարդապետներուն
- Շբթ. 19 Տօն Աւետարանիչներ՝ Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի, Յովհաննէսի

### Նոյեմբեր

- Շբթ. 9 Տօն Ա. Հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Միքայէլի
- Կիր. 17 Բարեկենդան Յիսնակի Պահոց
- Շբթ. 30 Տօն Ա. Առաքեալներ եւ մեր առաջին լուսաւորիչներ՝ Թադէոսի եւ Բարթօղիմէոսի

### Դեկտեմբեր

- Շբթ. 14 Տօն Ա. Յակոբ Մծբնայ հայրապետի, Մարուգէ ճգնաւորի, Մելիտոս եպիսկոպոսի
- Շբթ. 21 Տօն Ա. Աբգար անդրանիկ հաւատացեալ թագաւորին
- Գշ. 24 Տօն Ա. Ստեփանոս Նախասարկաւագի եւ առաջին մարտիրոսի



Սուրբ Թարգմանիչ Վարդապետներու տօնը հայ ժողովուրդի սիրուած ու նուիրական ազգային-եկեղեցական տօներէն է, ուր կը յիշատակուին **Մեսրոպ Մաշտոց, Եղիշէ Պատմիչ, Մովսէս Խորենացի, Դաւիթ Անյաղթ, Գրիգոր Նարեկացի եւ Ներսէս Շնորհալի**: Անոնք մեծ դեր ունեցած են հայերէնի պահպանման, կրթութեան եւ հոգեւոր մշակոյթի զարգացման մէջ: Մաշտոց ստեղծեց հայկական այբուբենը, Եղիշէ Պատմիչը գրեց «Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին» գիրքը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփայութեան գիրքեր թարգմանեց եւ գրեց, Նարեկացի գրեց «Մատեան Ողբերգութեան»ը, իսկ Շնորհալի իր աղօթքներով եւ բանաստեղծութիւններով ոգեշնչեց սերունդները: Անոնց գործունէութիւնը նպաստեց Հայոց աշխարհի հոգեւոր եւ մշակութային զարթօնքին:

Հայաստանին մէջ Քրիստոսի աւետարանը առաջին անգամ քարոզուեցաւ Սուրբ Թադէոս առաքեալի միջոցով: Թադէոս բուժեց Աբգար թագաւորը եւ Հայաստան բերաւ Սուրբ Գեղարդը: Ան դարձի բերաւ Սանատրուկ թագաւորն ու Սանդուխտ կոյսը, բայց Աբգարի մահէն ետք, Սանատրուկ ուրացաւ՝ սպաննելով Թադէոսը 46 թուականին: Սուրբ Բարթօղիմէոս, որ նաեւ Նաթանայէլ կը կոչուի, Հայաստան բերաւ Տիրամօր սրբապատկերը: Ըստ աւանդութեան, երկու առաքեալները հանդիպեցան Արտաշատի կամուրջին վրայ:

Հայ Առաքելական Եկեղեցին Նոյեմբեր ամսուան առաջին կամ երկրորդ Շաբաթ օրը կը յիշատակէ հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Միքայէլի տօնը: Հրեշտակները երկնային դեսպաններ են, որոնք ստեղծուած են արարչագործութեան առաջին օրը՝ լոյսին հետ միասին: Անոնք անմահ, անսեռ, եւ լուսեղէն էակներ են, որոնք Աստուծոյ կամքը կը կատարեն: Գաբրիէլը, որ կը նշանակէ «Աստուծոյ այր», հաղորդեց Սրբուհի Մարիամին Յիսուսի ծննդեան լուրը, իսկ Միքայէլը, որ կը նշանակէ «Ո՛վ է Աստուծոյ նման», կը պաշտպանէ Աստուծոյ ժողովուրդը:

In difficult times, when our faith is being tested, we might be tempted to wonder, "does God really care?" Krikor of Nareg, poses a different set of questions for such times. Knowing that it is almost morning (the first light of daybreak is already shining through the resurrection of our Saviour), how can we be afraid of the dark? "For who can reach morning and at the light of daybreak expect dark, or at the portal of life expect death, or at liberation expect bondage, or at grace expect condemnation, or at salvation expect destruction, or at renewal expect ruination, or at blessing expect banishment, or at cure expect injury, or at fullness expect want, or at abundance of bread expect famine, or at the flow of rivers expect drought, or at motherly compassion expect deception, or at the care of God's right hand expect persecution?" Nareg book 17, part B Grigor Narekatsi - Book of Prayer (armenianhouse.org).

*« Voilà pourquoi je vous dis : Ne vous inquiétez pas pour votre vie de ce que vous mangerez, ni pour votre corps de quoi vous le vêtirez. La vie n'est-elle pas plus que la nourriture, et le corps plus que le vêtement? Regardez les oiseaux du ciel : ils ne sèment ni ne moissonnent, ils n'amassent point dans des greniers; et votre Père céleste les nourrit! Ne valez-vous pas beaucoup plus qu'eux? Et qui d'entre vous peut, par son inquiétude, prolonger tant soit peu son existence? Et du vêtement, pourquoi vous inquiéter? Observez les lis des champs, comme ils croissent : ils ne peinent ni ne filent, et je vous le dis, Salomon lui-même, dans toute sa gloire, n'a jamais été vêtu comme l'un d'eux! Si Dieu habille ainsi l'herbe des champs, qui est là aujourd'hui et qui demain sera jetée au feu, ne fera-t-il pas bien plus pour vous, gens de peu de foi! Ne vous inquiétez donc pas, en disant : "Qu'allons-nous manger? qu'allons-nous boire? de quoi allons-nous nous vêtir?" — tout cela, les païens le recherchent sans répit —, il sait bien, votre Père céleste, que vous avez besoin de toutes ces choses. Cherchez d'abord le Royaume et la justice de Dieu, et tout cela vous sera donné par surcroît. Ne vous inquiétez donc pas pour le lendemain : le lendemain s'inquiétera de lui-même. A chaque jour suffit sa peine. » Matthieu 6:25-34*

St. James of Nisibis, a Syrian monk and cousin of St. Gregory, was appointed bishop of Nisibis in 308 A.D. He founded the basilica and theological school in the city. St. James was a signatory at the Council of Nicaea in 325 A.D., playing a key role in the formulation of the Nicene Creed, which is still chanted in Christian liturgies today. He is also known for his divine vision on Mount Ararat, where an angel gave him a relic from Noah's Ark. This relic is now preserved at Holy Etchmiadzin, and a spring miraculously appeared at the site of his vision.

Սուրբ Աբգար Ա. թագաւորը, Արշակունի Արշամի որդին, Ա. դարու առաջին քրիստոնէայ թագաւորն էր, որու մայրաքաղաքը Եդեսիան էր: Ըստ Մովսէս Խորենացիի, Աբգար թագաւորը լսելով Յիսուսի հրաշքներուն մասին, հաւատաց, որ Յիսուս Աստուծոյ որդին է, եւ նամակով խնդրեց զինք բժշկել: Յիսուս խոստացաւ աշակերտ դրկել: Յիսուսի համբարձումէն ետք, Ս. Թադէոս Առաքեալ բուժեց Աբգարն ու պալատականներ: Եկեղեցին Աբգար թագաւորի տօնը կը նշէ Յիսնակի Ե. Կիրակիին նախորդող Շաբաթ օրը:

Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետի տօնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին մէջ նշուած է Յիսնակի երրորդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը, Դեկտեմբեր 12-18-ի միջեւ: Ս. Յակոբը ծնունդով ասորի էր, Ս. Գրիգոր Լուսաւորիչի հօրաքրոջ որդին: Նախապէս Պարսկաստանի արքունիքին մէջ ապրած, ան ընտրեց ճգնաւորի կեանքը եւ ուղղուեցաւ Մծբին, որտեղ բնակեցաւ Մարուգէ ճգնաւորին մօտ: Հրաշքով տապանէն մասունք մը ստացաւ: Ան եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մծբինի աթոռին, մասնակցեցաւ Նիկիոյ Տիեզերական Ժողովին (325թ.): Յայտնի է իր «Զգօն» գիրքով: Ս. Ներսէս Շնորհալի Ս. Յակոբի նուիրած է գեղեցիկ շարական մը:

Ս. Ստեփանոս նախասարկաւագ՝ քրիստոնէայ առաջին վկան է, որ իր արինը թափեց Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդի խոստովանելով: Ան Յիսուսի 72 աշակերտներէն էր: Նոր Կտակարանի «Առաքեալներու Գործերը» գրքի 6-րդ գլուխին մէջ կը կարդանք Ս. Ստեփանոսի նշանակման եւ ձերբակալութեան պատմութիւնը, իսկ 7-րդ գլուխին մէջ անոր վկայութեան եւ քարկոծման մանրամասնութիւնները: Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկը Սօղոսն էր, ով յետագային Պօղոս Առաքեալ եղաւ: Ս. Ստեփանոսի տօնը մեր եկեղեցւոյ կողմէ կը նշուի Դեկտեմբեր 24-ին, 25-ին, կամ 26-ին եթէ 25-ը Կիրակի կամ պահքի օր ըլլայ

Հայաստանեայց եկեղեցին ամէն տարի Հոկտեմբերի 3-րդ Շաբաթ օրը կը յիշատակէ Քրիստոսի կեանքն ու քարոզչութիւնը պատմող ւստարանիչները՝ Ս. Մատթէոսը, Մարկոսը, Դուկասը եւ Յովհաննէսը:

**Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցւոյ Ժամանակացոյց  
Horaire de l'église arménienne Sourp Hagop**

**Կիրակի / dimanche**

- 9.00 Լուռ Աղօթք\* / Prière de consentement\*
- 9.30 Ժամերգութիւն / Heures canoniales
- 10.30 Ս. Պատարագ / Messe
- 10.30 Կիրակնօրեայ / École du dimanche

**Երկուշաբթի / lundi**

- 19.30 Դպրաց Դասի փորձ\* / Répétition de la chorale de l'église\*

**Երեքշաբթի / mardi**

- 19.15 Լուռ Աղօթք\* / Prière de consentement\*

**Չորեքշաբթի / mercredi**

- 9.15 Լուռ Աղօթք\* / Prière de consentement\*

**Հինգշաբթի / jeudi**

- 11.00 Քոյրերու աղօթածողով / Réunion de prières des sœurs

**\*Հետաքրքրուողներէն կը խնդրուի կապուիլ  
Եկեղեցւոյ գրասենեակ:**

**\*Pour tout renseignement, veuillez contacter le  
bureau de l'église.**

Յիսնակը 50 օր տւող պատրաստութեան շրջան է, որով կը նախապատրաստուինք Յիսուսի ծնունդին եւ աստուածայայտնութեան սունին, որ կը նշուի Յունուար 6-ին: Այս շրջանը սկսելով Նոյեմբեր 18-ի մօտ Կիրակիէն՝ Յիսնակի Բարեկենդանով, իր մէջ ներառած է պահքի ժամանակներ: Նախապէս Յիսնակը ամբողջովին պահքի շրջան էր, սակայն ներկայիս պահք կը պահուի միայն երեք շաբաթ՝ Յիսնակի առաջին շաբթուայ մէջ, եւ Ս. Յակոբի (Դեկտեմբեր), եւ Ս. Ծննդեան (Յունուար) սուներու պահքերով, բացի սովորական Չորեքշաբթիի եւ Ուրբաթի օրերէն:

Have you ever noticed how Jesus asks captivating questions that call out our curiosity and point us to God's involvement in our lives? "Is not life more than food?" Starting with curiosity, He then leads us to a disillusionment of living a life of useless worry that merely seeks to maximize momentary comfort. We can leave room for God. We are made to seek something much greater than food and clothes. Our lives become more peaceful and meaningful as we "seek first the kingdom of God and his righteousness". We can do this by prioritizing church on Sundays, praying, reading the Bible, serving our family and community... and sharing "Gantegh" with others.

**Կապուի՛ մեզի հետ, առաջարկներդ փոխանցէ՛, կարծիքդ արտայայտէ՛:**

**Contactez-nous, partagez vos suggestions, exprimez votre avis.**

**Contact us, share your suggestions, express your opinion.**

**Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

**Église arménienne Sourp Hagop**

**Sourp Hagop Armenian Church**

3401 Olivar-Asselin

Montreal, QC H4J 1L5

Հեռախօս: 514-331-5445 #202

Email: hokadar@sourphagop.net

Facebook: Eglise Armenienne Sourp Hagop Armenian Church

Instagram: @eglisesourphagop

